



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 հաբարի 2014 թ. № 52 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի № 121-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ *հրամայում եմ*.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կանոնակարգը, կազմկոմիտեի կազմը, հայտի ձևը և հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» № 121-Ա/1 հրամանի (այսուհետ՝ Հրաման) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հրամանի № 1 հավելվածի 5-րդ կետի 5.2 ենթակետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Կազմկոմիտեն բաղկացած է 12 անդամից, որոնցից 6-ը ներկայացնում են պետական մարմինները, իսկ 6-ը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը, Հայաստանի Հանրապետությունում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունները, տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության երիտասարդական մայրաքաղաքի հասարակական ակտիվություն ցուցաբերած ներկայացուցիչը»:

2. Հրամանի № 1 հավելվածի 5-րդ կետի 5.6 ենթակետից հետո լրացնել՝ «5.7 Կազմկոմիտեն իրականացնում է Մրցույթում հաղթած և Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք հռչակված համայնքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվելիք դրամաշնորհային ծրագրերի հայտերի ընդունումը, քննարկումը, ծրագրերի ընտրությունը, ինչպես նաև Մրցույթի շրջանակներում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի մշտադիտարկումը»:

3. Հրամանի № 1 հավելվածի 9-րդ կետի 9.2 ենթակետում «քվեարկությամբ» բառից առաջ ավելացնել «բաց» բառը:


4. Հրամանի № 1 հավելվածի 10-րդ կետի 1.3 ենթակետը հանել:

5. Հրամանի № 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:


ՅՈՒ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. Քարամյան




Մ. Անանյան



Ա. Պապյան



Ա. Պետրոսյան



Մ. Բաղդասարյան



Ք. Զիլֆուղարյան



---

Ուղարկել՝ ԵՔՎ, «ԵՄԻԿ» ՊՈԱԿ, քտղ., ՀՀ տարածքային կառավ. նախ., ՀՀ վարչ. առընթեր ազգային երիտ. քաղաքական. խորհուրդ, «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային ՀԿ, Մարիամ Թորոսյանին

Հավելված  
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի  
2014 թ. Տարբեր 25-ի N° 52 -Ա/1 հրամանի

«Հավելված N° 2  
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի  
2013 թ. մայիսի 23-ի N° 121 -Ա/1 հրամանի

Կ Ա Ձ Մ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԿԱ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»  
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

1. Արսեն Քարամյան - Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի տեղակալ (կազմկոմիտեի նախագահ),
2. Արմեն Պապյան - Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) երիտասարդական քաղաքականության վարչության պետ,
3. Արմենուհի Պետրոսյան - Աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,
4. Թամարա Թորոսյան - Աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության համագործակցության և վերլուծությունների բաժնի պետ,
5. Աննա Իվանյան - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի պետ,
6. Դավիթ Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

7. Յուլյակ Ակոպյան - Խորհրդի անդամ,
8. Հայկ Մամիջանյան - Խորհրդի անդամ,
9. Ռազմիկ Սարգսրյան - Խորհրդի անդամ,
10. Կառլեն Խաչատրյան - Խորհրդի անդամ,
11. Հրաչյա Համբարձումյան - «Մունետիկ» մանկապատանեկան մշակութային հասարակական կազմակերպության նախագահ,
12. Մարիամ Թորոսյան - Հայաստանի Հանրապետության 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքի երիտասարդական հասարակական ոլորտի ներկայացուցիչ:»:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Մ. ԱՆԱՆՅԱՆ